



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.egharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2116-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 հասցեում գտնվող 0.6հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ 27052025-05-0078/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 հասցեում գտնվող 0.6հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 0.45000հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 հողամաս հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 0.15000հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 / 3 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2118-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N146-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի հիմք ընդունելով, հիմք ընդունելով «Էյչ Էյ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ**.

1. «Էյչ Էյ Գրուպ» ՍՊԸ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 160 / 1 հասցե / տրամադրել 01.10.2025 -31.12.2025թթ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 11.340 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2118-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով և 118-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ թիվ N 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Մելիք Բաբայանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Լճաշեն հասցեում գտնվող 591.99քմ մակերեսով անասնագոմի /կադաստրային ծածկագիր՝ 05-040-0240-0001/զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 601.3քմ մակերեսով հողատարածքի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին, հաշվի առնելով այն, որ հողամասը ընդգրկված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Մելիք Բաբայանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն հասցեում գտնվող 591.99քմ մակերեսով անասնագոմի /ներքին մակերեսը՝ 505.58քմ/ զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 601.3քմ մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-040-0240-0001/ նկատմամբ վերականգնել հողատարածքի հողհատկացման հիմքերը, 601.3քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ՝ տրամադրելով անհատույց սեփականության իրավունք՝ անշարժ գույքի առքուվաճառքի նվիրատվության կամ փոխանակման դեպքում՝ համայնքային բյուջե հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով:
2. 05-040-0240-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 27-րդ փողոց թիվ 12 / 1 անասնագոմ հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2119-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արմեն Մնացականյանի դիմումը՝ կառուցապատման իրավիքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 53 հասցեում գտնվող հողատարածքին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող 90.7քմ մակերեսով հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 2.68քմ մակերեսով խանութը և 5.80քմ մակերեսով աստիճանահարթակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արմեն Արշակի Մնացականյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 9 / 53 հասցեում գտնվող հողատարածքին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող 90.7քմ մակերեսով հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 2.68քմ մակերեսով խանութը /ներքին մակերեսը՝ 1.75քմ/, 5.80քմ մակերեսով աստիճանահարթակը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 90.7քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայր հասարակական կառուցապատման:
2. Արմեն Մնացականյանի կողմից ինքնակամ կառուցված 2.68քմ մակերեսով խանութը, 5.80քմ մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023GNNWDT/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 11/12 խանութ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են՝ ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային

սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2120-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աշոտ Գալստյանի լիազոր անձ Արտավազ Գալստյանի դիմումը՝ Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990թ. մայիսի 31-ի թիվ 7 նիստի որոշմամբ Աշոտ Գալստյանին՝ ք. Սևան, Նոր թաղ թաղամաս հասցեում անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 600քմ մակերեսով հողատարածքից ավել օգտագործված հողատարածքն Աշոտ Գալստյանին տրամադրելու մասին, հաշվի առնելով որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը՝ **որոշում եմ.**

1. Սևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1990թ. մայիսի 31-ի թիվ 7 նիստի որոշմամբ Աշոտ Շալիկոյի Գալստյանին /ծնված՝ 18. 01.1960թ. / հատկացված 600քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 120քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Աշոտ Գալստյանի սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ. Այվազովսկու փողոց թիվ 12 / 1 հողամաս հասցե:
2. Աշոտ Գալստյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Հ. Այվազովսկու փողոց թիվ 12 / 1 հասցեում գտնվող 720քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 67. Օքմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք ք. Սևան Հ. Այվազովսկու փողոց թիվ 10 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով՝ հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝ 962.5 դրամ/ օտարել Աշոտ Շալիկոյի Գալստյանին:
3. Պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 09
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2121-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Աշոտ Մկրտչյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Աշոտ Մկրտչյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Զովաբեր, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող գոյություն ունեցող կիսակառույցի երկրորդ հարկի կառուցման համար:
2. Աշոտ Մկրտչյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2122-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Վահե Մանուկյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Վահե Մանուկյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց, 3-րդ փակուղի թիվ 11 հասցեում գտնվող հողատարածքում տնտեսական շինության կառուցման համար:
2. Վահե Մանուկյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2123-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՖԻԿ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Ռաֆիկ Հովսեփի Հովհաննիսյանին Սևանա լճի ափին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա շինությունների փաստը, պարզեցի. քաղաքացին, անտեսելով ՀՀ օրենսդրության պահանջները, խախտելով ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, ինքնակամ կառուցել է շենք-շինություն և քարից պարիսպ: Կառուցապատումն իրականացվել է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում: Սույն փաստով Սևանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով նախաձեռնվել է վարույթ: Պարզվել է նաև, որ քաղաքացի Ռաֆիկ Հովհաննիսյանը մահացել է 2011 թվականին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի բ ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Ռաֆիկ Հովսեփի Հովհաննիսյանին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում գտնվող հիմնական շինությունը և պարիսպը ապամոնտաժել (քանդել):
2. Ռաֆիկ Հովսեփի Հովհաննիսյանի իրավահաջորդին՝ կամավոր ապամոնտաժել շինությունը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:
3. Սույն որոշման 2-րդ կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2124-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՆՈՐԻԿ ԲԱԼԱԲԵԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Նորիկ Բալաբեկի Եղիազարյանին Սևանա լճի ափին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա շինությունների փաստը, պարզեցի. քաղաքացին, անտեսելով ՀՀ օրենսդրության պահանջները, խախտելով «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների, ՀՀ կառավարության՝ 2001թ. սեպտեմբերի 24-ի 896-Ն որոշման պահանջները, ինքնակամ կառուցել է և տեղադրել է շինություններ: Կառուցապատումն իրականացվել է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում: Սույն փաստով Սևանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով նախաձեռնվել է վարույթ: Պարզվել է նաև, որ քաղաքացի Նորիկ Եղիազարյանը մահացել է 2024թվականին: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի բ ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Նորիկ Եղիազարյանին /ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 6 հասցե/վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում գտնվող շինությունները ապամոնտաժել (քանդել):
2. Նորիկ Բալաբեկի Եղիազարյանի իրավահաջորդին՝ կամավոր ապամոնտաժել շինությունները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:
3. Սույն որոշման 2-րդ կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.ghgharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2125-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՕԼԵԳ ՌՈՒԲԵՆԻ ԴԱՎԹԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Օլեգ Ռուբենի Դավթյանին՝ Սևանա լճի ափին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա շինությունների փաստը, պարզեցի. քաղաքացին, անտեսելով ՀՀ օրենսդրության պահանջները, խախտելով ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, 2001թ. սեպտեմբերի 24-ի ՀՀ կառավարության 896-Ն որոշման պահանջները, ինքնակամ կառուցել է ոչ հիմնական շինությունները: Կառուցապատումն իրականացվել է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականություն հանդիսացող հողատարածքում: Սույն փաստով Սևանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներով նախաձեռնվել է վարույթ: Պարզվել է նաև, որ քաղաքացի Օլեգ Դավթյանը մահացել է 2022թվականին: Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Օլեգ Դավթյանին /ք. Սևան Նաիրյան փողոց թիվ 97 հասցե/ վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում գտնվող ոչ հիմնական շինությունները ապամոնտաժել (քանդել):
2. Օլեգ Դավթյանի իրավահաջորդին՝ կամավոր ապամոնտաժել ոչ հիմնական շինությունները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:
3. Սույն որոշման 2-րդ կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2126-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154¹ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 26-րդ և 42-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 24-րդ փողոց, 5-րդ նրբանցք թիվ 70 հասցեում գտնվող, «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ին պատկանող՝ գործառնական նշանակության փոփոխման, վերակառուցման, կաթսայատան շենքի վերակառուցման և կցակառույցի կառուցման՝ ցուցադրական էներգաարդյունավետ շինության և ուսուցումների իրականացման վայրի, շինարարական աշխատանքները սահմանված ժամկետում չավարտելու համար տուգանել չկատարված շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքի 3 տոկոսի չափով, այն է՝ 18000 դրամ:
2. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ին՝ 15-օրյա ժամկետում կամավոր հիմունքներով տուգանքը վճարել Սևան համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
3. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ին պատկանող, առկա շինությունների քանդման և առևտրի սրահի կառուցման համար աշխատանքներն ավարտին հասցնելու համար գործող քաղաքաշինական նորմերին և պահանջներին համապատասխան «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-ին տրամադրել նոր շինարարության թույլտվություն կամ երկարաձգել տրված շինթույլտվության գործողության ժամկետը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2127-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Արթուր Վանիկի Ավագյանին՝ Սևանա լճի ափին վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքում առկա շինությունների փաստը՝ պարզեցի. քաղաքացի Արթուր Ավագյանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ 27.10.2006թ. կնքել է հողի վարձակալության N 589 պայմանագիրը: Հետագայում քաղաքացու կողմից տարածքում տեղադրվել են բազմաթիվ ոչ հիմնական շինություններ, զրուցարաններ և կառուցվել է քարից պարիսպ՝ առանց թույլտվության: Փաստորեն, քաղաքացու կողմից խախտվել է ՀՀ կառավարության 2001թվականի սեռապտեմբերի 24-ի N 896-Ն որոշման, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների պահանջները: ՀՀ «քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այդ շինությունները համարվում են ինքնակամ շինություններ: Հողատարածքը հանդիսանում է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածք: Ելնելով վերը շարադրվածից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել քաղաքացի Արթուր Վանիկի Ավագյանից /ք. Սևան, Գրիբոյեդովի փողոց թիվ 5 / 21 հասցե/ ապամոնտաժելու (քանդելու) վարձակալության իրավունքով իրեն պատկանող հողատարածքում գտնվող հիմնական կառուցված շինությունները սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում:
2. Պահանջել Արթուր Վանիկի Ավագյանից՝ տարածքի կառուցապատումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2128-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01990հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 27 / 49 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 09
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2129-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արմեն Մալխասյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Նաիրյան փողոց, շուկայից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1670160, տրված՝ 19.11.2003թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նաիրյան փողոց, շուկայից արևմուտք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 134 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 10
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2130-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Աիդա Գալստյանի լիազոր անձ Սեդրակ Գալստյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 24062025-05-0014 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք թիվ 3 / 1 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 10
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2131-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0111-0001 կադաստրային ծածկագրով /գ. Վարսեր/, 0.89957հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 10
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2132-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում են**.

- Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0111-0001 կադաստրային ծածկագրով /գ. Վարսեր/, 0.2490հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
- Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03. 01. 2025թ. N 2-Ա որոշման 4-րդ կետի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2025 թվականի հոկտեմբերի 10
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2133-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Սահակ Ղազարյանի դիմումը՝ իր կողմից՝ ք. Սևան, 2-րդ միկրոթաղամասի հարևանությամբ ինքնական կառուցված 96.7քմ մակերեսով երկհարկանի ավտոտնակը, 46.26քմ մակերեսով ձեղնահարկը, 12.59քմ մակերեսով հարթակներն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սահակ Ղազարյանի կողմից՝ ք. Սևան, 2-րդ միկրոթաղամասի հարևանությամբ ինքնական կառուցված 96.7քմ մակերեսով երկհարկանի ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 79.65քմ/, 46.26քմ մակերեսով ձեղնահարկը /ներքին մակերեսը՝ 38.35քմ/, 12.59քմ մակերեսով հարթակները և զբաղեցրած 61.0քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն՝ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Սահակ Ժորայի Ղազարյանի կողմից ինքնական կառուցված 96.7քմ երկհարկանի ավտոտնակը, 46.26քմ մակերեսով ձեղնահարկը, 12.59քմ հարթակները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023ZTBCJS/՝ տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 70 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնական կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են՝ ինքնական կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2024թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի _____ բյուջե վերականգնելուց _____ հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հոկտեմբերի 10
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2134-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 11.07.2025Թ.

N 1453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 11.07.2025թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N1453-Ա որոշման հիմքում կատարել հետևյալ փոփոխությունը՝
